

ՍՅՈՒՆԻԱՍ ԵՐԿԻՐ

Գինը 100 դրամ:

ԵՐԵՎԱՆԻ
31 ՀՈՒՆՎԱՐ 2012Թ

№ 18 (259)

www.syuniacyerkir.am

... Թե հայերը թուրքի են սպանում, ախր դուք էլ հայ եք, բա ձեզ ինչո՞ւ են սպանում:
ԱՎԿԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Սիսիան. ֆինիսիա և կոմեդիա

ՎԱՐԱԳՈՒՅՐՆ ԻԶԵՏՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Այս օրերին Սիսիանում հիշում են «Պայացներ» օպերայի հերոս Կանիոյի վերջին խոսքը՝ «Ֆինիսիա և կոմեդիա», որ նշանակում է՝ կապակերպությունն ավարտվեց:

...Մենք մի քիչ շատ էինք կարեւորել ու կախազանցել սեպտեմբերի 9-ին կայանալիք ընտրության հնարավոր դերակատարների կշիռը Սիսիանի հասարակական-քաղաքական կյանքում: Եվ «Սյունյաց երկիր» ս.թ. մայիսի 31-ի համարում գրել էինք. «... Եթե նրանք մրցապայքարի դուրս գան ու պարտվեն, ապա այլևս չեն ունենա չկրակված փամփուշտ, եւ դա կլինի նրանցից յուրաքանչյուրի վերջին ճակատամարտը»: Իրադարձությունները Սիսիանում, մինչդեռ, այնքան արագ զարգացան, որ տեղական շատ լիդերների՝ վերջին ճակատամարտին չմասնակցելու հարցը նախապես կանխորոշվեց: Եվ ոչ թե այն բանի համար, որ իրենք չեն ուզում, այլև՝ հարկադրված են, քանի որ իրենց կարգադրված է խելոք մնալ, եւ որպեսզի ծօծադելի չլինի նրանց ճահանջը՝ հանձնարարված է տեղի-անտեղի կրկնել՝ «Ես պետության զինվորն եմ», «Նախագահականից եմ ինձ խնդրել» եւ այլն: Այնպես որ՝ Սիսիանում շարունակվում է «տեղական կուռքերի հուղարկավորություն» աննախադեպ սեզոնը, որ մեկնարկել էր Աժ ընտրությունների շրջանում, եւ երեկվա մի շարք «կուռքեր», որ դռն էին ծեծում վերջին ամիսներին, այլևս եւ ընդմիջտ ողորմելի են թվում: Վերջին փամփուշտի առկայությունն էլ, ըստ երեւոյթին, թվացյալ էր:

Իսկ ի՞նչ կատարվեց Սիսիանում: Նախ՝ ԳԻՄԻ Սիսիանի խորհուրդն առաջադրեց քաղաքապետի իր թեկնածուին՝ Սամվել Թանգյանին (այդ դերին հավակնում էին շատերը): Չնայած դրան՝ ԳԻՄԻ սիսիանյան մյուս թեկնածուի՝ Արթուրյանի համարեց սովորական ինքնագործունեություն, ԳԻՄԻ ղեկավարության հետ չհամաձայնեցված քայլ:

Մյուս կողմից՝ չեն դադարում խոսակցություններն առ այն (դա են վկայում նաեւ ԳԻՄԻ մեր աղբյուրները), որ ԳԻՄԻ ու ԲԳԿ-ի միջեւ ներկայումս տեղի ունեցող առեւտրում քննարկվում է նաեւ Սիսիանի քաղաքապետի հարցը: Իբր ԲԳԿ-ն, Գյումրիի եւ մի շարք այլ համայնքների օրինակով, խնդրում է ԳԻՄԻ-ին՝ սեպտեմբերի 9-ին գորակցել Սիսիանի իր թեկնածուին: ԳԻՄԻ-ն, ըստ էության, պատրաստ է զոհաբերել շատ-շատ բաներ, եթե ԲԳԿ-ն ԳԻՄԻ նախագահի առաջիկա ընտրության ժամանակ Գյումրապետականի թեկնածուին ստարտելու երդում տա: Եթե առեւտրական այդ գործարքը կայանա, ապա՝ ա) Սամվել Թանգյանը կզոհաբերվի ԲԳԿ-ի ուղերթի տակ, ինչն ուժգին ապաստակ կլինի ոչ միայն նրան, այլև ԳԻՄԻ-ի տեղական ու մարզային կառույցներին, բ) ԳԻՄԻ-ի տեղական գործիչները, որ չորս տարի շարունակ վարկաբեկում էին ԲԳԿ-ական քաղաքապետ Աղասի Դակոբջանյանին, պետք է գնան եւ աջակցեն նույն Աղասի Դակոբջանյանին:

Ճարտանկությունը՝ էջ 2



Գորիս, Յոթն աղբյուր հուշարձանը:

Տապալված է Գորիսի կոմունալ տնտեսության կառավարումը

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գորիսեցիներն օրինական հպարտությամբ ենք հիշում եւ նշում (պատեհ-անպատեհ), որ Գորիսը, իբրեւ քաղաք, հիմնադրվել է 142 տարի առաջ, որ այն Արեւելյան Հայաստանի (19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի) չորս քաղաք-

ներից մեկն է, որ Գորիսն այսօր էլ՝ յուրահատուկ ճարտարապետությամբ, հայաստանյան քաղաքների պատկեր է... Սակայն այդ ճշմարտությունների կողքին կա մեկ այլ ճշմարտություն եւս. դեռեւս Հոռոմի ժամանակներից քաղաք երեւոյթի ամենաառաջին առանձնահատկությունը կամ բնորոշիչը համարվել է տվյալ բնակավայրի ենթակառուցվածքների՝ ասել է թե՛ կոմունալ տնտեսության վիճակը:

Փորձենք Գորիս քաղաքը դիտարկել հենց այդ տեսանկյունից: Եվ առաջ անցնելով արձանագրենք, որ Գորիսի կոմունալ տնտեսությունն ուղղակի ամոթալի վիճակում է, որ այդ տնտեսությունը տնօրինվում է տարերայնորեն, ավելի հաճախ՝ քմահաճորեն եւ քաղաքի հեղինակությունը, բնակչության շահերն անտեսելով ու արհամարհելով...

Ճարտանկությունը՝ էջ 4

Կապանի բնակչության մոտ 10%-ը հաշմանդամ. ա՛յ քեզ բան

ԱՌԵՐԾՎԱԾ

Վիճակագրությունն էլ, պարզվում է, ավելորդ գլխացավանք է շար դեպքում: Վերջերս, օրինակ, երբ ուսումնասիրում էինք Կապանի ժողովրդագրական վիճակը, հայտնի դարձավ, որ մոտ 45 հազար բնակչություն ունեցող Կապանում հաշմանդամների թիվը հասնում է 4006-ի: Ընդ որում՝ վերջին չորս տարում աճը տեղի է ունեցել անընդհար: Այսպես՝ 2008-ին Կապանում կար 3424 հաշմանդամ, 2009-ին՝ 3629, 2010-ին՝ 3884, 2011-ին՝ 4017, 2012-ի առաջին կիսամյակի ավարտին՝ 4006 (մինչեւ փարեվերջ այդ թիվը, բնականաբար, կաճի): Ստացվում է, որ քաղաքում փարեկան մոտ 200-ով ավելանում է հաշմանդամների թիվը:

Որքանով տեղյակ ենք՝ այդ առումով, Կապանը Հայաստանում առաջին տեղն է զբաղեցնում համայնքների շարքում:

Ինչո՞ւ է այդպես, ինչո՞վ է պայմանավորված հաշմանդամների թվի կապանյան բուժը:

Պատասխանատու եւ նուրբ այս հարցին չենք շտապում պատասխանել: Մենք պարզապես ակնկալում ենք ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանի պարզաբանումը, չէ՞ որ խոսքը հարավ-արեւելյան Հայաստանի ամենախոշոր քաղաքի ժողովրդագրական վիճակի մասին է: Եթե իրոք այդ թվերն արտացոլում են համայնքի բնակչության առողջական վիճակը, ապա Կապանն իրոք հայտնվել է ժողովրդագրական ու առողջապահական լրջագույն սպառնալիքի առջեւ, ինչը պետք է մտահոգի Հայաստանի Հանրապետության քաղաքական բարձրագույն ղեկավարությանը: Իսկ եթե դա իրականության արտացոլանք չէ, իսկ եթե դա մի խումբ ոչ քրիստոնյաների փորձաքննական հանձնաժողովի նախագահ տիկին Մելադա Դյուլունցի պատասխանն առ այն, թե հաշմանդամների քանիսն են (ըստ տարիների՝ 2008թ. սկսած) առաջին անգամ ստացել հաշ-



Արթեմ Ասատրյան, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար

մանդամության կարգ, ինչը նոր լույս է սփռում երեւոյթի վրա: Այսպես՝ 2008թ.՝ 270 մարդ, 2009թ.՝ 242 մարդ, 2010թ.՝ 255 մարդ, 2011թ.՝ 276 մարդ, 2012թ. առաջին կիսամյակի դրությամբ՝ 127 մարդ:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՖՈՏՈՒՄ

Սիսիան. ֆինիպա Լա կոմեդիա

ՎԱՐԱԳՈՒՅՐԼ ԻՋԵՑՆԵԼՈՒՅ ԱՈՒԱԶ

Սկզբը՝ էջ 1

Գրեթե այսպիսի «համախմբում» տեղի ունեցավ նաեւ 2008-ի ՏԻՄ ընտրությունների երկրորդ փուլում: Բայց այն ժամանակ Աղասի Գալստյանը-

ընդ, սիսիանցիների լեզվով ասած, մի պատկառելի «խոր» էր ուղարկել եւ Լավրենտի Սարգսյանին, եւ Սամվել Թանգյանին, որպեսզի ստանան նրանց անկեղծ աջակցությունը: Հիմա էլ, եթե կայանա ԳԳԿ-ԲԳԿ առեւտուրը, վատ չեն լինի Աղասի Գալստյանի գործերը: Պարզապես նա հետո բարոյական սմբած իրավունք կունենա ասել, որ իրեն սիսիանցիներն են ընտրել, որ ինքը Սիսիանի ընտրյալն է:

Դե Գառնիկ Գոմարյանի նահանջը, որքան էլ սպասելի էր, խոսակցության այլ թեմա է, որին վաղ թե ուշ կամ հորատված է: Սյուն գործիչներն էլ՝ մեծ-մեծ խոսող, կանն այն, ինչ որ կիրահանված գործող իշխանությունները. ինքնուրույն գործելու եւ որոշումներ կայացնելու որոշ տարբերակ նրանց թողնված չէ: Իսկ Տիգրան Պողոսյանը կառավարողն էր. այդ մասին խմբագրությանը տեղեկացրեց ինքը՝ հուլիսի 25-ին մեզ հետ ունեցած հեռախոսազրույցում: Դա այն անձնավորությունն է, ով Սիսիանի քաղաքապետի 2008թ. ընտրության ժամանակ իսկապես ֆավորիտ էր, ով կարգախոս էր հռչակել. «Տեր կանգնել Սիսիանի արժանապատվությանը եւ թույլ չտալ, որ երեսնամյա Սյունի կառավարչությունը որոշեն Սիսիանի քաղաքապետի ով լինելը»: Այն ժամանակ (առաջին փուլում) նա ստացավ, ինչպես նշել ենք մեկ այլ աղբյուր, 1939

ձայն՝ 61-ով պակաս Աղասի Գալստյանից:

Սիսիանցիները էլ՝ եթե Գալստյանի պատկանը Սիսիանում թեկնածու չունենա, ուրեմն մայիսի 6-ի խայտառակությունից դեռ ուշքի չի եկել եւ հույս չունի, որ իր թեկնածուն հաջողություն կունենա:

Սիսիանում, մինչդեռ, շատերն են զարմացած ու վիրավորված, որ իրենց համայնքի ղեկավարի ով լինելը կարող է եւ որոշվել երեսնամյա իրենց թիկունքում՝ քաղաքական առեւտրի շնորհիվ:

Վերջին խոսքը, սակայն, ինչպես եւ մայիսի 6-ին էր, սիսիանցի ընտրողինն է:

ԱՍՏՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Խորեք

Կապանի N2 ավագ դպրոցի կառավարման խորհրդի հուլիսի 18-ի նիստին մասնակցում էր ութ անդամից յոթը: Օրակարգում մի հարց կար՝ կրթօջախի տնօրենի թափուր տեղի մրցույթի անցկացումը, որի համար հայտ էր ներկայացրել մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Լյուդվիգ Գարոբյանը: Հավակնորդը ներկայացրեց կրթօջախի 2012-18թթ. զարգացման իր հայեցակարգը: Պատասխանեց պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի համար նախատեսված եւ N2 ավագ դպրոցի կառավարման խորհրդի անդամների հարցերին: Այնուհետեւ տեղի ունեցավ ընտրությունը: Լյուդվիգ Գարոբյանը յոթ կողմ ձայնով ընտրվեց Կապանի N2 ավագ դպրոցի տնօրեն: Մրցույթին մասնակցում էր կրթության եւ գիտության նախարարության ռազմական եւ արտաուսումնական դաստիարակության վարչության առաջատար մասնագետ Արիս Խաչատրյանը:

Սյուն թվականի հուլիսի 16-19-ը եւ 20-23-ը երեսնամյա անցկացվեց ԳԳ լողափնյա վոլեյբոլի առաջնություն: Կանանց եւ մինչեւ 16 տարեկան աղջիկների մրցումներում առաջին տեղերը գրավեցին Սյունիքի «Լեռ-Էքս» մարզակույմի կանանց եւ Սիսիանի մարզադպրոցի աղջիկների թիմերը: Մարզիչ Աղվան Գալստյանի սաներն ապացուցեցին, որ ինչպես 2011-ին, այնպես էլ 2012-ին Գալստյանի ուժեղագույն թիմերը Սյունիքից են: Այժմ երկու թիմն էլ նախապատրաստվում է մասնակցելու օգոստոսի Բաթում քաղաքում կայանալիք միջազգային մրցույթին:

Կապանի քաղաքապետարանում «Գալստյանի երեխաների նկատմամբ բռնության նվազեցում» ծրագրի շրջանակում հուլիսի 25-ին տեղի ունեցավ հանդիպում, որին մասնակցում էին Կապանի քաղաքապետ Արտուր Աբայանը, ԳԳ ոստիկանության մարզային վարչության պետ Վախթանգ Ավագյանը, ԳԳ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Նելլի Դուրյանը, «Վորլդ Վիժն» կազմակերպության երեխաների պաշտպանության ծրագրերի ղեկավար Անահիտ Գրիգորյանը, մարզպետարանի եւ ոստիկանության անչափահասների խնդիրներով զբաղվող ոլորտի պատասխանատուներ: Ն. Դուրյանը, ներկայացնելով այս տարվա վեց ամսվա ընթացքում անչափահասների կողմից կատարված հանցագործությունները, ընդգծեց, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանք նվազել են 66-ով, եւ 1996 թվականից ի վեր մեծ դրական արդյունք չէր գրանցվել: Բանախոսը կարեւորեց համայնքային վերականգնման կենտրոնների դերը դեռահասների շրջանում իրավախախտումների կանխարգելման գործում: Հանդիպման մասնակից երեխաների իրավունքների պաշտպանությանը զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները եւ ոլորտի պատասխանատուները հանդես եկան նկատառումներով: Հանդիպման անդրադարձ եղավ նոր ուստարված ընդառաջ ոստիկանության կողմից իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումների: Համակարգող մեծ հնարավորություն կայացան Մեղրիում, Գորիսում, Սիսիանում եւ:

Հեղադարձ հայացք

Մարտական ընկերների հանդիպման վայրն անփոփոխ է

7-րդ անգամ նշվեց Կապանի բրիգադի առաջին մոտոհրաձգային գումարտակի հիմնադրման օրը: Հուլիսի 21-ին Գալստյանի տարբեր մարզերից ժամանած մարտական ընկերները, զոհված ազատամարտիկների հարազատները հավաքվել էին Կապանի զինկոմիսարիատի բակում: Ժամը 10-ին մեքենաների շարասյունը ուղղություն վերցրեց դեպի Շղարշիկ՝ լեյտենանտ Մարտիրոս Գալստյանի անվան N8 միջնակարգ դպրոց, որն Արցախյան պատերազմի տարիներին գումարտակի մշտական տեղակայման վայրն էր: Դպրոցի բակում Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանին զեկուցում են՝ գումարտակի մարտիկների՝ հանդիսությանը պատրաստ լինելու մասին: Նահատակ զինվորներ Մարտիրոս Գալստյանի եւ Գեորգ Գալստյանի փոխարեն շարք են կանգնում նրանց հայրերը՝ Վաղարշակ Գալստյանն ու Ռոբերտ Գալստյանը: Նախկին գումարտակի հրամանատար Լեոնիդ Գրիգորյանը եւս մի անգամ արժեպահում է օրվա խորհուրդը, ներկայացնում է տոնակատարության ժամանակացույցը, մասնավորապես, տեղեկացնելով, որ Կապանի մշակույթի կենտրոնում տեղի է ունենալու «Հետադարձ հայացք» վերնագիրը կրող եւ գումարտակի պատմությունը արտացոլող գրքի շնորհանդեսը:

– Երկար էի մտնում պատերազմական տարիների հուշերը թրքին հանձնելու մասին, բանգի այն համոզմունքն ունեի, որ գումարտակի մարտական ուղու յուրաքանչյուր դրվագ չափսի մոռացվի, եւ հետադարձ հայացք ձգելով 1991-ից սկսված իրադարձությունների վրա, որոշեցի իմ մարտական ընկերների, զոհված ազատամարտիկների հարազատների, բարձրաստիճանի հրամանատարների հուշերն ու մտքերն ամփոփել մի գրքի մեջ, ինչը եւ իրականություն դարձավ, – ասաց գրքի հեղինակը: – Հուսով եմ, որ գիրքը որոշ չափով կնպաստի մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Երախտապարտ եմ այն ծնողներին, ովքեր ժամանել են հեռու վայրերից, որ տեսնեն, թե ինչպես են իրենց զավակները մարտական մկրտություն ստացել, մեր հայրենիքի հարավային դարպասը պաշտպանել հակառակորդի ոտնձգություններից:

Լ.Գրիգորյանը շնորհավորեց գումարտակի հիմնադրման 19-րդ տարեդարձի առթիվ, այնուհետեւ բոլորը լռեցյալ հարգեցին գումարտակի զոհված մարտիկների իշխատակը: Մտնելով դպրոց, ներկաներն առաջինը եղան թանգարանում, որտեղ գումարտակի նահատակների լուսանկարներն են՝ Մարտիրոս Գալստյանը, Գրանտ Ղազարյան,



Ծաղկեղբման արարողություն Բաղաբուրջի հուշահամալիրում:

Գեորգ Գալստյան, Վյաչեսլավ Գոմարյանի, Եղուարդ Այվազյան, Մանվել Անտոնյան, Կարեն Թովմայան: Պատի տակ դրված գահավորակը ծածկվում է ծաղիկներով:

Իսկ դպրոցի բակում արդեն նախկին մարտական ընկերները տրվում են իշխողություններին, պատմում զավեշտախառն միջադեպեր, լիաթք ծիծաղում:

Սուսաննա եւ Ռոբերտ Գալստյան ամուսինները եկել են Գիլիջանի Թեղուս գյուղից: Նրանց նահատակված որդին՝ Գեորգ Գալստյանը նախ հուղարկավորվեց Բաղաբուրջի հուշահամալիրի գերեզմանոցում «Անհայտ զինվոր»

ցուցանակի ներքո: Այնուհետեւ զոհված ազատամարտիկի հարազատները սկսեցին փնտրությունները: Բայց սրտացավ եւ նախանձախնդիր մարդկանց ջանքերով, այդ թվում Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանի, Կապանի կոմունալ բաժնի այն տարիների տնօրեն Ռոմա Պետրոսյանի, հնարավոր եղավ վերահուղարկավորել զոհվածի դին իր հայրենի Թեղուս գյուղում՝ զոհվելուց հետո քառասուններորդ օրը: Ռազմի դաշտում յուրաքանչյուր մարտիկ իր ճակատագիրն ունի՝ ոչ մեկին չենամղող... – Այսօր, երբ կանգնած ենք այստեղ, հպարտ եմ Գեորգիս համար,



Վաղարշակ Գալստյան, երկու զոհված ազատամարտիկի հայր:



Զոհված ազատամարտիկ Գեորգ Գալստյանի ծնողները՝ Սուսաննա եւ Ռոբերտ Գալստյաններ:

Լուսավորող՝ Յ. Գալստյան

Լուսավորող՝ Յ. Գալստյան

ՔՉՕՉՑՉԱԷՍ Ի ՍԻ ԵձՕՁԱՅՈՍ

Ի հուշարձանի մերձակայքի ուղղակի անտանելի կացությունը. տարեկան մեկ անգամ՝ մայիսի 9-ին, մի քանի ժամով ջուր տեսնող ջրավազան, անատունների անարգել «գբոսանք», սելավներից առաջացած տիղմի ու աղբի «բլրակներ», անհետացած եզրաքարերի, անկյունաքարերի, սալաքարերի հետքեր... Դիչենք նաեւ, որ այդ հուշարձանը կառուցվել է 1980-ին՝ գորիսեցիների հանգամանակած միջոցներով: Լախագծի հեղինակը եւ ճարտարապետը Գեւորգ Մուշեղյանն է: Հուշարձանի շրջակայքը վերակառուցվել է 1985-ին՝ Սեւադա Ջաքարյանի նախագծով եւ Գորիսի քաղտորիդի գործկոմի պատվերով:

Այժմ Գորիսի աղբավայրի մասին: Վերջին 40-45 տարում Լաստ սարի հարավային լանջն է ծառայում իբրեւ աղբավայր: Մոտ 10 հա տարածք զբաղեցնող այդ ենթակառուցված գտնվում է քաղաքապետարանի հաշվեկշռում եւ հանձնված է «Գորիստնտ» ՓԲԸ-ի տնօրինությանը: ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության Սյունիքի մարզային կենտրոնի պետ Լեւոն Մալիցյանի կարծիքով՝ «Աղբավայր» սահմանված չափանիշներով եւ իմաստով, Գորիսում չկա, համաճարակի բույն է, փառք Աստու, որ բռնկում չկա, բայց դա կարող է տեղի ունենալ ամեն օր: Աղբն այրում են, մասամբ հողով ծածկում եւ վերջ: Ամեն աղբատարի բեռնաթափումից հետո այնտեղ ինչ-որ երեխաներ են հայտնվում եւ աղբի մեջ ինչ-որ բան փնտրում: Դե խոզերը, անատուններն ու շներն անպակաս են լինում: Գոնե ցանկապատեին...»: Լեւոն Մալիցյանի դիտարկումը հավելյալ անգամ հավաստում է, որ աղբավայրը Գորիսում անտերության է մատուցում: Տարեկան մոտ 2 մլն դրամի ֆինանսավորում, օրական 20 տոննա (ըստ Սեյրան Գեւորգյանի) աղբի տեղափոխում (հսկայական), շաքարախմորի մեկ-երկու անգամ տրակտորով աղբի ծածկում եւ... վերջ: Աղբավայրը, ինչպես նշեցինք, ցանկապատված չէ, այնտեղ չկա հատուկ թափոններ, մնացորդների եւ կենդանիների դիերի գերեզմանոց: Գորիս գյուղից աղբավայր ձգվող ճանապարհին արգելափակոց չկա, պահակ չկա: Ոչ ոք ի զորու չէ կասեցնել քաղաքում աղբահանությանը զբաղվող 5-6 մեքենայի վարորդների կամայականությունը, ովքեր աղբը թափում են՝ որտեղ կամենում են: Արդյունքում՝ աղբավայրն արագ տեմպերով մոտենում է քաղաքի այդ թաղամասին: Գորիս գյուղից մոտ 300 մետր հեռավորության վրա արդեն բախվում ենք աղբակույտերի: Ըստ Սեյրան Գեւորգյանի՝ վերջին 4-5 տարում աղբավայրի ճանապարհը չի մաքրվել, իսկ ավելի վաղ դրված արգելափակոցը ջարդել ու շարտել են, որպեսզի մեքենաների կամայական երթուղիները չխանգարվի: Իմիջիայլոց, Գորիս գյուղից մինչեւ աղբավայր ընկած՝ կես ճանապարհին, Լաստ սարի ստորոտում կա բնական ընդարձակ մի տարածք, մի քարափ, որտեղից Գորիսի հարավային թաղամասը երեւում է ամբողջ հմայքով: Այդ վայրը հիմա աչքի է ընկնում աղբակույտերի եւ գարշահոտությանը: Այդ անեղ հանդերձ որոշ աղբատարների վարորդներ իրենց կտրուկությամբ անընդհատ մոր «բնագծեր» են նվաճում՝ աղբը թափելով Գորիս-Կապան մայրուղու (Արեգունի թաղապահ տարածք) եւ Թոզ կապի գերեզմանոց տանող ճանապարհի աջուձախ կողմերին: Աղբակույտերի, գոմաղբի «բլրակների» մի առանձին շքերթ էլ տարին բոլոր կարելի է համդիպել Սինդարա ծորի բնակելի թաղամասում:

Գորիսի քաղաքային տնտեսու-

թյան մեջ մեկ այլ պրոբլեմ է Վարարակն գետի մերկայիս կացությունը: Ակներից, Վերիչենից սկսած մինչեւ քաղաքի Շոռան թաղամասի տարածք գետն ամբողջովին վեր է ածվել աղբավայրի: Այնտեղ անարգել թափվում են աղբ, Վերիչենի ու Ակների պանրի արտադրամասերի ու Գորիսի որոշ ձեռնարկությունների կեղտաջրերը, կոյուղու ցանցից չօգտվող մասնավոր տների կոյուղաջրերը: Ըստ քաղաքային իշխանության ներկայացուցիչների՝ քաղաքի կոյուղագծից 13 տեղ ջուրը թափվում է Վարարակնի մեջ (խոսքը կոյուղու ցանցում նկատվող ընթացիկ վթարների մասին չէ, որոնք հիմնականում վերացվում են օպերատիվորեն): Եվ այդ ամենը, հատկապես ամառվա ամիսներին, գարշահոտություն է սփռում մերձակայքում: Ըստ Լեւոն Մալիցյանի՝ «Ամեն ինչ պետք է սկսել Ակներից, Վերիչենից, այլապես Վարարակն գետին փրկություն չկա»: Վարարակնի հունի հեռապատերը՝ կառուցված 1980-ականներին, քանդվում են:

Քննարկման հատուկ հարց է բազմաբնակարան շենքերի պահպանության դրվածքը: Ըստ տրայան այդ ոլորտն ընդհանրապես մոռացության է մատնված ու չի կառավարվում: Բացթողումն այն չէ, որ Գորիսում ի սկզբանե տեղ չտվեցին համատիրությունների գաղափարին (եւ շատ ճիշտ արեցին, քանզի կառավարման այդ ձեռք, թեկուզեւ Կապանի օրինակով, մեծագույն ցնորք է), եւ ստեղծեցին ընդամենը մեկ համատիրություն՝ «Սամդի ծոր» անվամբ, Սինդարայում երկու բազմաբնակարան շենք (40 ընտանիք) սպասարկելու առաքելությանը: Ըստ համատիրության նախագահ Գյուլչորա Սաֆարյանի՝ կառավարման այդ ձեռք ճիշտ ընտրված է, թեւ չենք հասկանում, թե 1 քառակուսի մետրի համար ամսական 10 դրամ վարձավճար հավաքելով (23 հազար դրամ ամսվա ընթացքում) տիկին Գյուլչորան ինչպես է հոգում երկու շենքի հոգսերը, եթե, իսկապես, հոգում է: Համատիրության նախագահը, որքան էլ զարմանալի է, տեղյակ չէ, որ բնակապատարկման վարձավճարը Գորիսում՝ արդեն մեկ տարի շարունակ, 20 դրամ է: Գորիսյան իշխանության բացթողումն այն է, որ վերջին 20 տարում այդպես էլ պատասխան չտվեց համայնքային կյանքի ամենազվիսավոր հարցերից մեկին՝ ինչպես կառավարել բազմաբնակարան 109 շենքերը (այդքանը՝ միայն «Գորիստնտ» հաշվեկշռում), որոնցում բնակվում է 2227 ընտանիք: Ճիշտ է, մտցվել է սպասարկման վարձ՝ 1 քառակուսի մետրն ամսական 20 դրամ չափով (նախկինում 12 դրամ էր, ավելի վաղ՝ 6 դրամ): Բայց ոչ այդ գումարն է «Գորիստնտ» ՓԲԸ-ն կարողանում հավաքել (Սեյրան Գեւորգյանի վկայությամբ՝ հազիվ 5 տոկոսն է հավաքվում, որը չի բավարարում նույնիսկ այդ նպատակով աշխատող երեք հաշվարարի վարձատրությանը), ոչ էլ համակարգված աշխատանք է տարվում այդ շենքերի՝ տարեցտարի բազմապատկվող խնդիրների լուծման համար: Այդուհանդերձ, ըստ Սեյրան Գեւորգյանի, վերջին մեկ տարում 16 շենքում դռան նորոգման եւ պատուհանների սպակեպատման խնդիր է լուծվել: Ի դեպ, բազմաբնակարան շենքերը հիմնականում սեփականաշնորհված են, եւ խոսքն այդ շենքերի պահպանմանը բնակիչների (սեփականատերերի) միջոցով կազմակերպելու մասին է, որը նույնպես տեղական ինքնակառավարման մարմնի խնդիրներից է:

Գորիսի կոմունալ տնտեսության մեջ ստեղծված ծանր վիճակի մասին պատկերացումն ամբողջացնելու համար ասենք նաեւ, որ

քաղաքն ի սկզբանե չի ունեցել եւ չունի կեղտաջրերի մաքրման կայան, որ քաղաքի որոշ թաղամասեր, որքան էլ զարմանալի է, կոյուղագծեր չունեն առայսօր, որ բազմաբնակարան շենքերի բակերի խաղահրապարակների զգալի մասը կուլ է զնացել ավտոտնակների եւ այլ կամայական կցակառույցների, որ օրերով չենք ազատվում չղատարկվող աղբարկղերի տիրական ներկայությունից (ծայրամասային թաղամասերում՝ հատկապես), որ ծայրամասային փողոցները ձեռքն աղբեր չեն մաքրվում՝ դրանից բխող տհաճություններով, որ տարիներ շարունակ փողոցների ծառերը չեն ետվում, որ առունների մի մասը (իսկ առունները Գորիսի ճարտարապետական դեմքի յուրօրինակ գծերից են) կիսաբանդ վիճակում է եւ չմաքրված, որ քաղաքի ծայրամասային մի շարք փողոցներ բարոբանդ վիճակում են, որ... Ամբողջությամբ թեքության վրա գտնվող քաղաքում սանիտարական արտառոց վիճակը խտանում է հորդառատ անձրեւներից հետո, ինչի հետեւանքները ոչ միշտ են օպերատիվորեն հաղթահարվում «Գորիստնտ» տեխնիկական անգործության պատճառով:

Քաղաքի բնակիչներն էլ, ինչպես տեսնում ենք, օտարվել են իրենց իսկ բնօրրանի այդ հիմնախնդիրներից եւ ոչ միայն չեն նպաստում իրավիճակի մեղմացմանը, այլեւ ավելի սրություն են հաղորդում: Այլապես՝ ինչպե՞ս բացատրել փաստը, որ 150-160 աղբարկղի առկայության պարագայում քաղաքացին գերադասում է աղբը լցնել գետի մեջ: Ինչպե՞ս բացատրել փաստը, որ անասնապահությանը զբաղվող գորիսեցին գոմաղբը լցնում է փողոցի առվի մեջ: Ինչպե՞ս բացատրել փաստը, որ աղբատարի վարորդն աղբը թափում է ոչ աղբավայրում կամ Գորիս գյուղի բնակելի տներից մի քանի մետր հեռավորության վրա: Ինչպե՞ս բացատրել փաստը, որ քաղաքացին քանդում է փողոցի ասֆալտը՝ չունենալով քաղաքապետի կամ կոմունալի պետի թույլտվությունը եւ պատասխանատվություն չկրելով քանդումի հետեւանքների վերացման համար:

Համատարած այս անպատասխանատվության եւ անտարբերության հետ մեկտեղ, պարզվում է, իշխում է նաեւ անպատժելիությունը, թեւ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը կա եւ ուժի մեջ է: Գոնե մեկ մարդ աղբը սահմանված տեղում չթափելու համար վարչական տուգանքի, պատասխանատվության կամ հասարակական պարտավանքի ենթարկվել: Ոստիկանության ոչ մի աշխատակից էլ այդ ոլորտում կարգուկանոնի հաստատումն իր գործը չի համարում: «Հայքումուկոյուղի» ՓԲԸ-ն էլ մտահոգված չէ կոյուղու խնդրի արմատական կարգավորմամբ: Սանեպիտկայանն էլ շարունակում է խույս տալ սուր եւ խնդրահարույց հարցերից: Դե իսկ քաղաքապետարանում, եթե հավատալու լինենք քաղաքապետ Նելսոն Ոսկանյանին, պատկերացնում են ստեղծված իրավիճակի լրջությունը, որը շտկելը ֆինանսական ահռելի միջոցներ է պահանջում: Գորիս համայնքի զարգացման ռազմավարական ծրագրում (նախատեսված 2012-22թթ. համար) նաեւ կոմունալ տնտեսությանն առնչվող հարցեր են նախատեսված: Բայց քանի որ դրանց ֆինանսավորման աղբյուրները ճշտված չեն, ուստի չի կարելի դրանց թղթային գոյությանը լուրջ վերաբերվել: Նելսոն Ոսկանյանը դժգոհ է բնագավառը տնօրինող «Գորիստնտ» ՓԲԸ-ի գործունեությունից, բայց, կարծես, չի կարողանում արմատական փոփոխություններ (նաեւ կադրային) անել

այնտեղ: Քաղաքապետը նշում է, որ գոնե համայնքային սուղ միջոցներով ժամանակ առ ժամանակ լուծվում են քաղաքային տնտեսության առանձին հարցեր: Այսպես՝ 2011-ին կարգավորվել է քաղաքի ոռոգման համակարգը, 2012 թվականին հայտարարվել է քաղաքի լուսավորության զարգացման տարի եւ այդ նպատակով ծախսվել է 27 մլն դրամ, ինչի արդյունքում քաղաքում դրվել է եւս 300 լուսատու (թեւ ծայրամասային փողոցներն այդպես էլ մնացել են խավարի մեջ): Այս տարի նաեւ նշագծվել են քաղաքի փողոցները (11 կմ երկարությամբ), երեք խաչմերուկում դրվել են լուսացույցեր: 2013 թվականն էլ համայնքում կհայտարարվի կանաչապատման տարի: Բայց դրանք, խոստովանենք, անցանակաբայել են, որոնք, ի վերջո, չեն կարող փոխել կոմունալ տնտեսության ողբալի դրությունը:

Ինչո՞ւ է Գորիսի քաղաքային տնտեսության մեջ ստեղծվել այսպիսի վիճակ: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ խնդիրների զգալի մասը գալիս է նախորդ տասնամյակներից, եւ հիմա դրանք ավելի սուր բնույթ են ստանում, լուծումներն էլ լուրջ ֆինանսական միջոցներ են պահանջում՝ մայթերի կարգավորում, կոյուղու համակարգի վերակառուցում, մաքրման կայանի կառուցում, Վարարակն գետի հունի մաքրում եւ պահպանում, ժամանակակից աղբավայրի կառուցում... Խնդիրների երկրորդ խումբը սկիզբ է առնում այն ժամանակից, երբ տեփականաշնորհման անվան տակ թալանեցին ու մեջ-մեջ արին կոմունալ ծառայության հարուստ ունեցվածք՝ շենքը, գործնական բակը, մեքենաարքայությունները: Խնդիրների երրորդ խումբը պայմանավորված է համայնքի ֆինանսատնտեսական տկարությամբ: Խնդիրների չորրորդ խումբն էլ բացառապես քաղաքի կոմունալ ոլորտի կառավարման անարդյունավետության եւ կադրերի անպատասխանատվության արդյունք է: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը (հոդված 37) սահմանում է համայնքի ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները կոմունալ տնտեսության բնագավառում: Ծանոթացեք եւ կհանդգնեք՝ դա իրավաճեմեքների եւ պարտականությունների մի ծավալում ցանկ է: Եվ ահա այդ խնդիրներն իրագործելու համար քաղաքապետարանը հիմնադրել է «Գորիստնտ» ՓԲ ընկերությունը, որի բաժնեմասերի միակ տերը (2002 թվականից) քաղաքապետարանն է: Ու մի քանի կոնկրետ (պատվիրակված) խնդիրներ լուծելու համար քաղաքապետարանը գումար է հատկացնում ՓԲԸ-ին (այս տարի՝ մոտ 25 մլն դրամ): Մոտ այդքան գումար էլ հավաքվում է կամ պիտի հավաքվի բնակչությունից՝ սպասարկումների դիմաց: Թվում է, թե խնդիր լուծված է: Բայց... Ինչպես տեսնում ենք, «Գորիստնտ» ՓԲԸ-ն չի կարողանում նվազագույնս իրագործել խնդիրները՝ սահմանված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով: Մեր ուսումնասիրություններից հանգեցինք եզրակացության, որ քաղաքապետի՝ կոմունալ տնտեսության բնագավառում պարտականությունների ամբողջությունը մի կազմակերպության ձեռքում կենտրոնացնելը (առնվազն մեթոդա Գորիսի պարագայում) ոչ արդյունավետ լուծում է, մանավանդ որ այդ պարտականություններն ու ֆինանսական միջոցները նշված ՓԲԸ-ին են հատկացվում առանց իրական մրցույթի: Ժամանակ չէ՞ որդյոք (միգուցե փորձենք), որ որոշ ոլորտներ (կոմունալ տնտեսությունից) մրցութային կարգով տանք որեւէ այլ կազմակերպության (Գորիսում, կարծում ենք, կգտնվեն

նման գործարարներ կամ տնտեսավորողներ): Ասենք՝ աղբահանությունը, քաղաքի կանաչապատումը, բազմաբնակարան շենքերի սպասարկումը... Այլապես՝ քանի՞ լուծա արժե «Գորիստնտ» գոյությունը, եթե նրան վերապահված հարցերի լուծումը (անգամ օբյեկտիվ պատճառներով պայմանավորված) չի իրագործվում: Քաղաքապետն ու կոմունալ տնտեսության ղեկավարն ասում են, թե աղբահանության վարձը քաղաքում կիսով չափ է հավաքվում, որ մարդիկ հրաժարվում են սահմանված գումարը վճարել: Իսկ միգուցե հավաքո՞ղ չկա, միգուցե քաղաքացին գումարները չտալու պատճառնե՞ր ունի: Միգուցե այդ ոլորտը փորձնական կարգով տանք այլ կազմակերպության եւ այլ սկզբունքով՝ կառավարենք: Բոլոր դեպքերում ժամանակն է, որ նշված ՓԲԸ-ին առաջադրված կանոնադրական խնդիրները վերանայվեն ու թողնվեն նրա իրական կարողություններին համաչափ պարտականություններ: Այնպես որ՝ չպետք է առաջնորդվել ստով ու ձեւակառույթային եւ քաղաքի կոմունալ տնտեսությունը մատաղ անել ինչ-որ «Գորիստնտ» ՓԲԸ-ի ուղեքի տակ:

18 տարի շարունակ այդ ոլորտը ղեկավարում է Սեյրան Գեւորգյանը: Իհարկե, նա երվանդ Հովհաննիսյան չէ (Գորիսում շարունակվում են կոմունալի պետին չափել անվանի այդ գորիսեցու արժանիքները), թեւ նա կյանքից հեռացել է 1973-ին), ժամանակներն էլ ուրիշ են: Բայց Սեյրան Գեւորգյանը լավ գործարարի, չարչարվող, վազվզող ղեկավարի համբավ ունի: Ինչ-որ բան, սակայն, չի ստացվում նրա մոտ: Եվ ամենակարեւորը՝ բոլոր բացթողումների ու թերությունների համար ինքը պատճառներ ունի՝ իբր իրենից կատված: Սեյրան Գեւորգյանը, որքան էլ ինքը չի ուզում պաշտոնավարել (ինչպես խոստովանում է հաճախ), որքան էլ իրեն չեն ազատում (քառ-նի որ ազատման դիմում չի գրում), պետք է հիմնովին վերափոխի իր աշխատանքը, եթե, իհարկե, ի վիճակի է, եթե, իհարկե, ժամանակ ունի... Չարմանալի է հանգամանքը, որ, ըստ Սեյրան Գեւորգյանի, բանվոր չի գտնվում Գորիսի կոմունալ տնտեսությունում աշխատելու համար, երբեմն բանվոր է հրավիրվում Շուշուկ: Եվ ինչ էլ ծագում ինչո՞ւ, օրինակ, հարեան Ստեփանակերտում, Կապանում այդ ոլորտի համար աշխատողներ են գտնվում, Գորիսում՝ ոչ: Միգուցե խորանա՞նք պատճառների մեջ: Ոչ պակաս գարմանալի է հանգամանքը, որ այդքան կամայականություններով վարչական կառավարման վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունը: Մարդն աղբը թափում է չթույլատրված վայրում՝ ձեռքից չեն բռնում, մարդն ասֆալտը քանդում է՝ ժպտալով անցնում են կողքով: Գորիս՝ տարօրինակ չէ քաղաքի հաշվին «լավ տղայի» կեցվածք ընդունելը: Եվ ամենակարեւորի մասին երիցս՝ առանց բնակչության ակտիվ մասնակցության հնարավոր չէ շտկել վիճակը: Իսկ պատկան օղակներն ու պաշտոնյաները շոշափելի ոչինչ չեն անում հանրության մեջ վարուց հանգած այդ պատասխանատվությունը (հայրենի բնօրրանի հանդեպ) արթնացնելու համար:

Ամփոփենք. Գորիս քաղաքի կոմունալ տնտեսության կառավարումը տապալված է, այն հիմնովին վերակազմակերպելու հրամայականի առջեւ է կանգնած: Արմատական քայլեր չձեռնարկելու դեպքում հնամենի Գորիսը կշարունակի վերջնականապես կորցնել իր նկարագիրը, քաղաքային դեմո-դիմագիծը, ինչին ակամատես ենք, ինչի հետ կարծես հաշտվել ենք...

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ԵՎ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՅՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

Բրիգադի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մ.Գ.Գրիգորյանի հուշերը, 23 հունվարի 1994թ., Յորտիգ

ՀԱՏԱԾ «ՅԵՏԱԳՈՐԶ ՀԱՅԱՅՔ» ԳՐԷԻՑ

Այս իրադարձությունները ես մեծ ցավով եմ հիշում, քանի որ իմ սպաների, զինվորների և սերժանտների կորուստներն եմ ունեցել՝ նրանցից յուրաքանչյուրի հետ մի պահ մեռնելով: Գրում եմ այս մասին՝ քաջ գիտակցելով, որ յուրաքանչյուր հրամանատարի համար՝ սկսած դասակից, ամենաթանկն իր անձնակազմն է: Ցավոք, այն ժամանակ կային հրամանատարներ, ովքեր պարծենում էին զոհվածների քանակով: Չեմ հիշատակում նրանց ազգանունները, քանի որ հետագայում գիտակցեցին և այլևս չէին ասում: «Ես 100 զոհ տված հրամանատար եմ»:



Այս իրադարձություններն սկսվեցին, երբ 1994թ. հունվարին գեներալ Գ.Ա.Գալիբալթյանն այցելեց մեր տեղակայման վայր եւ մարտական դիրքեր: Նա ամբողջ ժամանակ պնդում էր, թե ինչն էլ չենք առաջ շարժվում, ինչո՞ւ է ենք տեղում կանգնած: Ես փորձում էի բացատրել, որ դեռ պատրաստ չեմ, չեմ կարող դա մենակ անել, ուժերն ու միջոցները չեն բավականացնում և ամենակարևորը՝ հենց այնպես մարդկանց չեմ կարող կորցնել: Նա շատ տհա՜ս էր դժգոհ դեմքով հեռացավ, այցելեց հարեւան բրիգադի հրամանատարին՝ գնդապետ (ներկայումս՝ գեներալ-մայոր) Վալերի Նարիմանի Գրիգորյանին, նույնը... Ինչեւէ, նա որպես պաշտպանության նախարարի ներկայացուցիչ, իր առաջարկանքն էր կատարում, իսկ մեր առաջարկանքն էր լավ պատրաստվել և կատարել մարտական խնդիր:

մատար, գնդապետ Վ. Գրիգորյանը:

Նրանից ավելի ծախ պետք է հարձակվեին ռադաբաղցիները (գումարտակի հրամանատար՝ Խուրուշինակ):

Այս առաջադրանքի լուծման համար ես որոշեցի ներգրավել 1-ին ՄԳԳ-ն՝ ավագ լեյտենանտ Լեոնիդ Գրիգորյանի հրամանատարությամբ (մշտական տեղակայման վայրը՝ Գ. Շղարշիկ): 4-րդ ՄԳԳ-ն՝ կապիտան Արայիկ Թունանյանի հրամանատարությամբ (1992թ. մշտական տեղակայման վայրը Մեղրու Լիճք գյուղն էր, մենք այն այդպես էլ անվանեցինք Լիճքի գումարտակ, այնուհետեւ 1993թ. այն տեղափոխեցին Կապանի նախկին «Գամձասար» պիոներական ճամբար, որը պատկանում էր Քաջարանի պղնձամուղիբերնային կոմբինատին): Ուզում եմ նշել, որ այն ժամանակ ողջ ազգը կանգնած էր զինվորի, բանակի կողքին, և բոլոր հարցերը լուծվում էին հեշտ ու արագ: Կոմբինատի տնօրենը՝ Ռոման Ծամվոնի Նավասարդյանը և գլխավոր ինժեներ Մաքսիմ Անուշավանի Յակոբյանը ոչ միայն համաձայնեցին տեղակայել գումարտակի այդ պիոներական ճամբարում, այլ նաեւ ամեն օր օգնում էին գումարտակին ինչով կարող էին՝ սկսած անձնակազմին կերակրելուց: Այդ մարտի ժամանակ գումարտակի հրամանատարն էր ավագ լեյտենանտ Արտակ Մուշեղյանը, այդտեղ էր մայրը Սերգեյ Կոստիկը և քիկունցի գծով տեղակալ Արթուր Ալեքսանյանը: Թե որտեղ էր գումարտակի հրամանատարը, չեմ հիշում:

Երկրպագի խմբի (մշտական տեղակայման վայրը՝ ք.Կապան) հրամանատարն էր Մանվել Օհանյանը: Մարտի ժամանակ անձնակազմին հրամայում էր նրա տեղակալ Սարիկ

Սկրտյանը:

Այդ մարտին մասնակցում էր նաեւ Ստեփանավանի ջոկատը՝ Վալերի Տոնոյանի գլխավորությամբ, շտաբի պետն էր Արմեն Ավագյանը: Նրանց հանձնարարեցի երեկոյան մոտ վիրավորներին ու զոհվածներին մարտի դաշտից դուրս բերել:

Այդ մարտն ավարտվեց ուշ երեկոյան:

Սովորաբար մարտից հետո ես այցելում էի բուժկետ և աջ սեյնակից սկսում վիրավոր անձնակազմի շրջայցը: Նրանք պառկած էին հատակին՝ ներքնակների վրա և սպասում էին՝ երբ են իրենց վիրակապելու կամ առաջին բուժօգնությունը ցուցաբերելու և ուղարկելու Կապան, Գորիս կամ Երեւան:

Կապանում մենք հիանալի վիրաբույժներ ունեինք՝ Նիկոլայ Աղախանյան, Ռոմա Սարգսյան, Էլման Ամիրյան: Նրանց հետ էին նաեւ Աշոտ Պետրոսյանը, Նորայր Յարուստոյանը, Թելման Յարայետյանը, Սոս Դահրամանյանը, Սմբատ Օրբելյանը, Լենդրուշ Գալստյանը և ուրիշներ: Բուժկետի բուժքույրերից անգնահատելի էին Սելանյա Գեորգյանի, Ավետա Յարոստոյանի, Մարինե Յամբարձումյանի, Ամալյա Մարտիրոսյանի ջանքերը:

Երբ մոտեցա հեթոթական վիրավորին, տեսա, որ ոտքը ծնկից ներքե կտրված է և ջրերի ու մի փոքր կաշվի վրա է պահվում: Նա Մեղրիի գումարտակի ակրավոր էր, բոլորը «ճուտո» էին անվանում: Այդ կրվում նա հրամանատարից ստացել էր առաջադրանք՝ ակնազերծել տարածքը, որտեղ պետք է հարձակում գործեր 1-ին ՄԳԳ-ն: Այդ մարտի ժամանակ առաջադրանքը կատարելիս նա վիրավորվել էր՝ ընկնելով ականի վրա: 1-ին գումարտակի հրամանատարն ու շտաբի պետը սկսել էին օգնել նրան, և հենց այստեղ էլ վիրավորվեց ավագ լեյտենանտ

Լ. Գրիգորյանը, թշնամու ականից: «Ճուտոյին» հարցրեցի, թե ինչպես է իրեն ազդում և խորհուրդ տվեցի դիմանալ, շուտով բուժօգնություն կցուցաբերեմ: Նա ինձ պատասխանեց, որ ամեն ինչ կարգին է, ինքը կդիմանա, բայց իր հրամանատարն իրեն շատ վատ է զգում: «Ահա, լսում եք նրա ծայրը, այդ նա է հառաչում: Նա ավելի վատ վիճակում է, քան ես: Նա ուզում էր ինձ օգնել և նույնպես վիրավորվեց»: Խոստացա, որ հրամանատարի համար ամեն ինչ լավ կլինի և նայեցի այն կողմը, որտեղից լսվում էր հառաչանքը: Այն գալիս էր սեյնակի ծախ կողմից: Նա 1-ին ՄԳԳ-ի հրամանատար Լ.Գրիգորյանն էր: Մոտենալով նրան՝ բռնեցի ձեռքը և բարձրաձայն արտաբերեցի նրա անունը: «Լեոնիդ»: Նա ուշքի եկավ: Ճանաչելով ինձ՝ հարցրեց, թե ինչպես ավարտվեց մարտը: Պատասխանելով նրան՝ սկսեցի քաջալերել՝ գոտեպնդելով, որ նրա հետ ամեն ինչ լավ կլինի: Նա բազմաթիվ վնասվածքներ ուներ, հատկապես ազդրի ու ձեռքի շրջանում:

Յիշում եմ, պատերազմից հետո նա կաղում էր և ձեռնափայտով էր ման գալիս: Բժիշկները նրան խորհուրդ էին տվել ավելի շատ քայլել: Մի քանի անգամ էլ ես եմ խորհուրդ տվել, բայց տեսնելով, որ չի ստացվում, որոշեցի առգրավել նրա մեքենան, որպեսզի ոտքով քայլի, մոտ մեկ ամիս ոտքով էր ման գալիս: Անշուշտ, դա նրան օգնեց, եւ նա հիմա քայլում է ազատ, բայց ինձից վիրավորվել էր, չնայած չէր խոսում այդ մասին:

Այն օրերին մեր բանակի ուժը Լ.Գրիգորյանի նման սպաները և «ճուտոյի» նման զինվորներն էին: Եվ նրանք շատ էին:

Փառք ու պատիվ նրանց: Յրամանատարական մեծ շնորհակալություն:

Յեպարարձ հայացք

Սկզբը՝ էջ 2

Բաղաբուրջի հուշահամալիրում բոլորը շարքով անցնում, ծաղիկներ են դրվում բոլոր ընկածների շիրմաքարերին, այնուհետեւ անհայտ զինվորի հուշարձանին:

— Այսօր կռված տղաների գործն արժեւորելու պահանջը կա, — հայացքը սահեցնելով Բաղաբուրջի հուշահամալիրում ամփոփված ազատամարտիկների դիմապատկերների վրայով՝ ասում է գումարտակի նախկին մարտիկ, այժմ տարածքային կառավարման նախարարության քարտուղարության պետ Արթուր Ազատյանը, — ուրախ եմ, որ այդ գործը ձեռնարկեց և իր տրամաբանական ավարտին հասցրեց իմ հրամանատար Լեոնիդ Գրիգորյանը, այսօրվա սերունդը պիտի ճանաչի նաեւ իր մոտ անցյալը, ինքն էլ դաստիարակվի Արցախյան գոյամարտի դասերով: Այսօրվա հրամայականը փխրուն խաղաղությունն ամրապնդելն է: Արցախյան պատերազմը չպիտի կրկնվի: Իսկ դրա միակ գրավականը տնտեսության հզորացումն է: Սա շատ կարեւոր և սուրբ օր է, երբ նախկին զինվորներին հնարավորություն է ընձեռնվում խնամարկելու նահատակ մեր զինակիցների առջև, նաեւ ներողություն խնդրելու, որ չկարողացանք պաշտպանել նրանց:

— Ես խնդրել եմ որդու՝ Մարտիրոսի անունը չհանել գումարտակի

անվանացուցակից, միշտ նրա տեղը կզբաղեցնեմ մարտական շարքում, այն տղաների հետ, որ Մարտիրոսի հետ զենք են բռնել, հերթապահության զննանք, փառք նրանց, ովքեր իրենց կյանքը տվել են հայրենիքի համար, միանգամայն չնստածելով, որ իրենց հետեւից հայր ու մայր են թողնում, կին ու երեխաներ: Փառք նաեւ նրանց, ովքեր հաղթանակով վերադարձան, — ասում է երկու զոհված ազատամարտիկի հայր Վաղարշակ Յարայետյանը:

Երբ ծաղկեղբուն արարողությունն ավարտվում է, մոտոհրած-գային առաջին գումարտակի մարտիկները լուսանկարվում են Մեծ հայրենականում ընկած կապանցի զինվորների հիշատակը հավերժացնող հուշակոթողի ֆոնին՝ որպես գումարտակի հիմնադրման 19-րդ տարեդարձի օրվա հիշատակ:

Տարեդարձը նշանակորվեց գրքի շնորհանդեսով

«Յետադարձ հայացք» գրքի (խմբագիր՝ Մարտիկ Գալստյան) շնորհանդեսը տեղի ունեցավ Կապանի մշակույթի կենտրոնի կինոդահլիճում, որին մասնակցում էին մարզկենտրոնի տարբեր խավերի ներկայացուցիչներ, զինվորականներ, հյուրեր: Նախ՝ ցուցադրվեց տեսաֆիլմ գումարտակի մարտական ուղու մասին, առաջին պլանին հրամանատար Լեոնիդ Գրիգորյանի

գործունեությունն էր, ով հընթաց արժեքավորում էր իր մարտական ընկերների ավանդը մերօրյա ազատամարտում: Իսկ երբ դափնիքները վառվում են լույսերը, արդեն ներկայների առջև գրքի ստեղծման մասին հանդես է գալիս ներածական խոսքով, խոստովանելով, որ մինչ այդ ինքն ուներ երեք զավակ, երբ հուլիսի 2-ին լույս ընծայվեց գիրքը, այն զգացողությունն ունի, որ իր չորրորդ զավակն է ծնվել:

«Յետադարձ հայացք» գրքի բովանդակությունը ներկայացրեց առաջին գումարտակի երկրորդ վաշտի հրամանատար, այնուհետեւ՝ շտաբի պետ Մարտիկ Գալստյանը, նշելով, որ 2010 թվականից իրենք որոշել են գրառել գումարտակի պատմությունը՝ ուշադրություն ավելի կենտրոնացնելով հետապետեազմյան տարիների վրա, քանզի դրանք վերլուծության ժամանակներ են նաեւ, համեմատության, գուգահեռներ անցկացնելու ժամանակներ: «Պատերազմում միայն մի ճշմարտություն կա. այն, որ մեկը հաղթում է, մյուսը՝ պարտվում: Պարտվողները խոսելու տեղ չունեն: Յաղաղները՝ հաղթանակն անմեքենն է, նորածնից մինչեւ զառամյալը, գյուղացուն ու բանվորին է, քաջին ու վախկոտին, անմեղինն ու մեղավորինը, զենքը պաշտողին ու զենքից խուսափողինը, զենեղալին ու զինվորինը: Ու մասին ինչ էլ գրես, տեղին է ու արդարացի», — ասաց բանախոսն ու համագամորեն ներկայացրեց գրքի տարբեր վերնագրերի տակ ամփոփված նյութը: «Լեզենդար գեներալը» վերնագրի ներքո շարա-

դրանքը պատմում է բրիգադի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի մասին: Երկու պատերազմների՝ Մեծ հայրենականի և Արցախյանի մասնակցին, բրիգադի ողջ անձնակազմը, ի նշան խորին երախտագիտության, «պապիկ» էր կոչում: Մարդ, որ չնայած իր պատկառելի տարիքին, շրջապատին զարմացնում էր երիտասարդական ավյունով, վճռականությամբ, նպատակին հասնելու անասելի ձիրքով: Եթե ինչ-որ մեկը չգիտի, թե ինչպես սիրել հայրենիքը, պարզապես պիտի հետեւել լեզենդար գեներալի օրինակին, եզրակացնում է Ելույթ ունեցողը և տեղեկացնում, որ առաջին մոտոհրածային գումարտակի մասին գրքում կարծիքներ և տեսակետներ են ներկայացրել գեներալ-մայոր Վաղմիր Յարայետյանը, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանը, գեներալ-լեյտենանտ Միջայել Գրիգորյանը, Կապանի ներքին գործերի պահպանության բաժնի նախկին պետ, գնդապետ Օճիկ Ստեփանյանը, գումարտակի շտաբի պետ Տիգրան Պետրոսյանը, հրամանատարի տեղակալներ Ռաֆիկ Տոնոյանը, Արմեն Ոսկանյանը, Ղարիբ Յուլիանիսյանը, նրա մասին հուշեր են պատմել 1993-1994թթ. Լ.Գրիգորյանի եղբայրության տակ կռված զինվորներ Մուրեն Խաչատրյանը, Ասատուր Վարդանյանը, Արթուր Ազատյանը, Արամ Գյուրջյանը և բազմաթիվ այլ ժամանակակիցներ:

Գումարտակի պատմությունը հյուրը միշտ եղել է Վահանավանը պեղող արշավախմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը: Վահանավանը գումարտակի տեղակայման վայրի՝ Շղարշիկի ճիշտ դիմացն է, ամեն տողանի շարվելիս զինծառայողներն ակամայից հայացքներն ուղղում էին Վահանավանքին, խաչակնքում, երդվում անառիկ պահել հայոց հարավային սահմանները: Գումարտակի՝ 1993թ. բոլոր զինծառայողները հավանաբար հիշում են պրոֆեսորի իմաստակից ելույթը հերթական անգամ մարտի դաշտ մեկնելիս:

Իր խոսքի ավարտին Մարտիկ Գալստյանը երախտագիտություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր օժանդակել են նպաստել են գրքի հրատարակության իրականացմանը: Գրքի ծնունդը ողջունեցին և շնորհավորանքի խոսք ասացին Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը, Կապանի բժշկական քոլեջի տնօրեն Ռոմա Սարգսյանը, զոհված ազատամարտիկների հայր Վաղարշակ Յարայետյանը, գումարտակի նախկին մարտիկ Արթուր Ազատյանը, գոհված ազատամարտիկի մայր Սուսաննա Յախվերդյանը: Բոլորի խոսքում մի ընդհանրական միտք կար. գիրքը մարդկային ճակատագրերի մասին է և անդառնալի կորստից, մոռացությունից մշուշից փրկել է շատ դեմքեր և իրադարձություններ:

Ձեռնված ազատամարտիկների մայրերին հանձնվեցին շնորհակալագրեր և հուշանվերներ, որից հետո հանդիսության մասնակիցների համար տրվեց համերգ:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆԱՆ

ՕՉԻ ԶԻ ԶԾԾԻ ԵՉԾԾՍՍՉՍԱԷՍ ՂՍԱձՕԹԷ ԹՉԾՉԾ

Քաջարան գյուղի խնդիրը, որ սառեցվել էր Նախընտրական շրջանում, կրկին օրակարգում է

«ՔՐՈՆԻՍԵՏ մայնինգ» ԲԸ հայտարարությունը Քաջարան գյուղի եւ հարակից տարածքներին առնչվող խնդիրների վերաբերյալ

Հարգելի քաղաքացիներ
«ՔՐՈՆԻՍԵՏ մայնինգ» ընկերությունը, որպես «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության հիմնական բաժնետեր, անհրաժեշտ է համարում իր դիրքորոշումը ներկայացնել ՀՀ կառավարության որոշմամբ Սյունիքի մարզի որոշ տարածքների նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու եւ այդ տարածքները ԶՊՄԿ-ին տրամադրելու շուրջ ծագած իրավիճակի կապակցությամբ:

մայնքի բնակչության համար ապահովում է միջին հանրապետականից բարձր կենսամակարդակ:
Ավելորդ չենք համարում նաեւ նշել, որ կոմբինատի կողմից արտադրվող մոլիբդենի խտանյութն ամբողջությամբ վերամշակվում է Հայաստանում՝ Երեւանում գտնվող ձեռնարկությունների կողմից, որոնք իրենց հերթին ունեն մոտ 1000 աշխատակից: Այսպիսով, անվիճարկելի է, որ ԶՊՄԿ-ն, ինչպես Սյունիքի տարածաշրջանի, այնպես էլ որը հանրապետության տնտեսական կայունության եւ շարունակական զարգացման երաշխիքներից մեկն է:



ՍԵՐՍ ԳԱՐՏՆԻ ԹՈՂՄԱ, ՄԱՍ 2

Ապրիլի 14-ին «ՔՐՈՆԻՍԵՏ Մայնինգ» ընկերությունը, որպես «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության հիմնական բաժնետեր, հանդես էր եկել հայտարարությամբ, որով անհրաժեշտ էր համարել ներկայացնել իր դիրքորոշումը ՀՀ կառավարության որոշմամբ Սյունիքի մարզի որոշ տարածքների նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու եւ այդ տարածքները ԶՊՄԿ-ին տրամադրելու շուրջ ծագած իրավիճակի կապակցությամբ:

Ի պատասխան այս հայտարարության Քաջարանի գյուղապետ Ռաֆիկ Աբայանն ասաց. «Սուտ է այդ

ամենը, իրենք ոչինչ չեն անում ոչ Քաջարան գյուղի, ոչ էլ քաղաքի համար: Մեզ հ'ըն, թե երեւանյան հիմնարկություններում 1000 աշխատատեղ են բացում, այդ կոմբինատը Քաջարանում է եւ ոչ թե Երեւանում: Բարձր աշխատավարձի մասին հավաստումներն էլ կապ չունեն իրականության եւ Քաջարան գյուղի հետ»: Իսկ Քաջարան գյուղի տարածքում հանքի հնարավոր շահագործման մասին նա ասաց. «Մենք պայքարել ենք եւ կշարունակենք պայքարել: Նախագահն ասել է, որ չի թողնի մեր գյուղը քանդել, ինքը մեզ հետ է»: Ռաֆիկ Աբայանը պարզաբանում է. «Նախագահին ասել եմ, որ մենք իր կողքին ենք, որովհետեւ ինքն էլ իր հերթին խոստացել է, որ թույլ չի տա ոչ մեկը մեր գյուղը քանդել: «Ես երկրում նախագահից ավելի բարձր մարդ կա», ես հավատում եմ իմ նախագահին: Այս ամբողջ ժամանակ մենք սպասում էինք նախագահի խոսքին, որն ի վերջո հստակ հնչեց», - ասաց նա: Իսկ համայնքի ծայրերի մեծամասնությունը ս.թ. մայիսի 6-ին Հանրապետականին տալու փաստը պարզաբանեց այսպես. «Քվեարկել ենք Հանրապետականին օգտին, մեր նախագահի խոսքին ինչքան ծայր կարողացել է տվել ենք»: Թե երբ կգնա նախագահի հետ հանդիպման Ռաֆիկ Աբայանը, դեռ չի որոշել, բայց հաստատապես ասաց. «Իհարկե, գնալու եմ, եթե Սերժ Սարգսյանը կանչել է, պիտի անպայման գնամ, բայց ե՞րբ, դա դեռ չգիտեմ»:
ԱՐԱՎՆԻ ՆԱՎԱՍՏՐԴՅԱՆ

ԶՊՄԿ-ի բաժնետերերի որոշմամբ՝ տարեցտարի զգալի միջոցներ են տրամադրվում (ոչ պակաս, քան 3 մլրդ ՀՀ դրամ) սոցիալական ծրագրերի ֆինանսավորման համար, որոնք իրականացվում են Հայաստանի ողջ տարածքում: Հաշվի առնելով ԶՊՄԿ աշխատակիցների անգնահատելի ներդրումը, բաժնետերերն ընկերության տարեկան զուտ շահույթի 5%-ն ուղղում են ընկերության աշխատակիցների պարգևավճարների ֆոնդին, որի արդյունքում ԶՊՄԿ-ի ողջ աշխատակազմն ուղղակիորեն դառնում է ձեռնարկության հաջողությունների շահառու:

Ամփոփելով ասվածը, ցանկանում ենք լայն հասարակության ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ գործող հանքի ընդլայնումը բացառապես պայմանավորված է ԶՊՄԿ գործունեության երկարաժամկետ պլանավորմամբ եւ նախատեսված է թե խորիքային շրջանի նախագծերով, եւ թե գործող կոմբինատի գործունեությունը ոչ միայն չի նպաստում բնակչության արտագաղթին, այլ՝ հակառակը, ռազմավարական նշանակություն ունի սահմանափակ շրջանի ամրապնդման եւ տնտեսական զարգացման համար: ԶՊՄԿ-ի եւ տեղական ենթակառուցվածքային կազմակերպությունների հարգարժեքը աշխատակիցների կոմբինատում կայուն եւ երաշխավորված եկամուտ ունենալու շնորհիվ, իրենց եւ գավազների ապագան կապում են հայրենիքի հետ: Ձեռավորվել է գործում է մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող աշխատակազմ, մարդիկ կապված են իրենց աշխատանքային կոլեկտիվին, մասնագիտական ժառանգորդության սկզբունքով շատ ընտանիքների համար կոմբինատը դարձել է հարազատ օջախ: ԶՊՄԿ-ն այսօր իր աշխատակիցների հարգարժեքը կոմբինատի հետ համարում ենք լիովին հիմնավորված, որը երաշխավորելու է Հայաստանի արդյունաբերական հսկայի՝ ԶՊՄԿ-ի հետագա շարունակական աշխատանքը:

Միաժամանակ ցանկանում ենք նշել, որ թեեւ վերոհիշյալ խնդրի վերաբերյալ տարբեր հասարակական կազմակերպությունների եւ անձանց կողմից բարձրացվող հարցերը եւ արվող եզրահանգումները ոչ միշտ են կրում կառուցողական բնույթ եւ հաճախ մուլտիսկալերներ չունեն իրերի իրական դրության հետ, այնուամենայնիվ, մենք ողջունում ենք կառուցողական քննադատությունը եւ քննարկումները բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ խնդիրների հնարավոր հանգուցալուծումներն ապահովելու համար, գիտակցելով, որ քաղաքացիական հասարակության նման ակտիվությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գործում էական նշանակություն ունեցող ձեռնարկության գործունեության մտահոգությամբ:

Եզրափակելով՝ նշենք, որ «ՔՐՈՆԻՍԵՏ մայնինգ» ընկերությունը վերահաստատում է իր դիրքորոշումը՝ խնդիրները լուծել քաղաքացիների իրավունքների պաշտպանության եւ ժողովրդավարության սկզբունքով: ԶՊՄԿ-ի տնօրինությունը բաժնետերերի կողմից լիազորված է, հաշվի առնելով կողմերի օրինական շահերն ու իրավունքները, փնտրել փոխդիզոնային լուծումներ:
ՀՀ-ում «ՔՐՈՆԻՍԵՏ մայնինգ» ԲԸ-ի ներկայացուցչություն

■ այդ տարածքների նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահի ճանաչումը եւ դրանց հանձնումը մասնավոր հանքարդյունաբերական ընկերությանը իրավաչափ չէ,
■ Քաջարան համայնքի բնակիչների տեղահանումը կնպաստի ՀՀ-ից արտագաղթին, ինչպես նաեւ սահմանափակ գոտու բնակավայրերի թուլացմանը,
■ արդյունահանման տարածքների ընդլայնումը պայմանավորված է ոչ թե արտադրական անհրաժեշտությամբ, այլ միայն նպատակ է հետապնդում ավելացնել ընկերության շահույթը:
«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը» հիմնադրվել է 1951թ.՝ Քաջարանի հանքավայրը շահագործելու նպատակով: Քաջարանի հանքավայրը ներառում է ներկայիս շահագործվող հանքը, ինչպես նաեւ Ողջի գետի ձախ ավին գտնվող տարածքները, որտեղ եւ տեղակայված է Քաջարան գյուղը: Գետի հոսանքն ի վար տեղակայված է կոմբինատը եւ Քաջարան քաղաքը, որն ունի շուրջ 7000 բնակչություն:
ԶՊՄԿ-ն Հայաստանի Հանրապետության առաջատար արդյունաբերական ընկերություն է, որի արտադրանքն իրացվում է արտաքին շուկաներում, ինչի արդյունքում ապահովվում է հանրապետության արտաթույթի ներհոսքի զգալի մասը: Միաժամանակ, արտաքին շուկաներում ձեռք բերված ֆինանսական միջոցները ծախսվում են Հայաստանում՝ նպաստելով ՀՀ տնտեսության զարգացմանը: Օրինակ, 2011թ. ընթացքում կոմբինատն իր կենսագործունեությունն ապահովելու նպատակով տեղական 347 ընկերությունների հետ կնքել է ապրանքների ձեռքբերման եւ ծառայությունների մատուցման շուրջ 44.2 մլրդ ՀՀ դրամի պայմանագրեր եւ գործարքներ: Կոմբինատը ներկայում ունենալով 3200 աշխատակից, Քաջարան քաղաքի համար, ըստ էության, հանդիսանալով քաղաք ձեռավորող ձեռնարկություն, իր աշխատակիցների, նրանց ընտանիքի անդամների, ասել է թե՛ հա-

Մեզ համար առաջնաերթությունների շարքում է թիզնեսի սոցիալական պատասխանատվության խնդիրը: Ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամը տարիներին բաժնետերերը, ինչպես նաեւ՝ ԶՊՄԿ-ի տնօրինությունը, համայնքներում ունեցած ողջ ներուժը եւ հնարավորությունները, ապահովել են կոմբինատի բնականոն եւ անփափան

աշխատանքը: Ի տարբերություն ոչ միայն Հայաստանում, այլեւ արտերկրում գործող շատ հանքարդյունաբերական ընկերությունների, մեզ հաջողվել է մուլտիսկալ մետաղների գների աննախադեպ անկման պարագայում պահպանել բոլոր աշխատատեղերը եւ սովորականի նման, առանց ուշացումների, վճարել աշխատավարձ:



Ծառայությունն ավարտեց մեդալով

Խմբագրությունը փորձում է որ-գելորել հայոց բանակում սահմա-նադրական պարտքը կատարող մարտիկներին՝ տպագրելով գորա-մասի հրամանատարների՝ նրանց ծնողներին ուղղված շնորհակալա-կան նամակները: Բայց այս անգամ խրախուսվողը՝ Արտակ Թեւանյանը ոչ թե գորամասի շնորհակալությանն էր արժանացել, այլ 33 նախագահի հրամանագրով՝ «Մարտական ծա-ռայության համար» մեդալի: Իսկ մինչ գինծառայությունը՝ Արտակն ավարտել էր 3763 Կապանի մաս-նաճյուղը՝ «Օգտակար համաժողովրդի ստորերկրյա մշակումներ» մասնա-գիտացմամբ: Բանակ զորակոչվե-լով՝ Արտակը Մարշալ Բաղրամյանի անվան ուսումնական մտոհրաձ-գային բրիգադում հմտացել է ռազ-մական մասնագիտության մեջ, նաեւ ստացել կրտսեր սերժանտի կոչում: Ծառայության ավարտին ավագ սեր-ժանտ Արտակ Թեւանյանը արժանա-ցել է պետական պարգևի՝ որպես լավագույն դիրքի ավագ: Այս ամենի համար արտանց ուրախ են հուճի-սին զորացրված զինվորի ծնողները՝ հյուսն-ատաղձագործ ժորա Թեւա-նյանը եւ տնային տնտեսուհի Ալվի-նա Խաչատրյանը:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Գյուղատնտեսությունից մինչև ինքնա-պաշտպանություն ու ՏԻՄ ղեկավար

ՆԵԱՆԱԿՈՒՄ Այկաբը էջ 3

առաջադրելու. «էլ հոգնել եմ, ես էլ եմ հոգնել ինձանից, ծանձրացել, ժո-ղովորդն էլ, մարդիկ թարմություն են ցանկանում»: Ասում է, որ կմնա գյու-ղում, որտեղ հող ու այգի ունի, բերք ստանալով անչափ ուրախանում է, հաճույքով աշխատում:

Ջավակների մասին պատմե-լիս՝ հպարտությամբ նշում է, որ այդ առումով էլ է պետության հանդեպ պարտքը կատարել՝ չորս որդի ու-նենալով: Երկուսից երկուսը հաս-տատվել են գյուղում: Ի դեպ ավագը՝ Արմենը, 16 տարեկանում ինքնա-պաշտպանության օրերին դիրքեր էր զնում...

Ռիսկ էր պետք սահմանամերձ գյուղում, որի տների 75 տոկոսն ավերվել էր պատերազմական գոր-ծողություններից, ՏԻՄ ղեկավա-րի պաշտոնը ստանձնելը, ինչպես գյուղապետն է ասում, ընթացքում առաջարկել է այլոց՝ թեկնածուներն առաջադրեն ու ընտրվեն, հրաժար-վել են... Իսկ իրեն, այնուամենայ-նիվ, այս տարիների ընթացքում հա-ջողվել է բազում խնդիրներ ունեցող համայնքում որոշ հարցեր լուծել:

Սրաշենը նորակառույց դպրոց-համայնքային կենտրոն ունի, որը Գ.Աղաբեկյանը գյուղի կյանքում «հրաշք» է անվանում: Ի դեպ, տա-սանայկներ ի վեր Սրաշենի դպրո-ցականները 4-րդ դասարանից հետո Շիկահողի դպրոց էին հաճախում, 1994-ից գյուղապետին հաջողվեց փոխել «ավանդույթը», եւ հիմա նրանք մինչև վերջին դասարանը Սրաշենում են սովորում:

Դպրոց-համայնքային կենտրոնի շենքի կառուցմանը զուգահեռ՝ դրա հարակից տարածքից՝ գյուղի կենտ-րոնից, 1000 խմ աղբ է դուրս հան-վել: Նորակառույց շենքում դպրոցից բացի տեղավորվել են գյուղապե-տարանը, բուժկետը, գրադարանը, նաեւ խաղասենյակ կա: Գյուղապե-տարանն ու դպրոցն ապահովվել են նոր գույքով: Սպորտային գույք են

ծեռք բերել, ու գյուղի երիտասարդ-ներն արդեն ազատ ժամանցի հնա-րավորություն, հավաքատեղի ունեն: Երեխաների համար խաղահրապա-րակ է կառուցվել: Սրաշենում նաեւ պեհավաք է տեղադրվել, եւ այժմ բնակիչները նախկին երկու ալիքի փոխարեն հեռուստատեսային բա-զում ալիքներ դիտելու հնարավոր-ություն են ստացել:

Վերանորոգվել է Շոր աղբյուրը, որի համար են ժամանակին իրենց նախնիները հիմնել այս գյուղը: Իսկ այն տարիներ ի վեր չէր գործում, որպես խմելու ջուր չէր օգտագործ-վում, դրան կեղտաջրեր էին խառ-վում, տարածքում հսկայական աղբ էր կուտակվել: Հիմա բնակիչները խմելու համար այնտեղից են ջուր տանում, քանի որ տներում հոսող ջուրը տեխնիկական նպատակների համար է միայն պիտանի: Գյուղում կարողացել են կոյուղի կառուցել, եւ կենցաղային կեղտաջրերն այլևս չեն ներծծվում խմելու ջրի աղբյուրը: Գյուղամիջյան ճանապարհներ են ասֆալտապատվել, վերանորոգվել է պատերազմից ավերված կենցաղի տունը, համալրվել գույքով: Երկու անգամ ցանկապատվել է գերեզմա-նատունը:


Բնական է՝ սահմանամերձ ու ավերված գյուղի սուղ բյուրեղով լուրջ աշխատանքներ չես կատարի, եւ մնամատիպ խնդիրների լուծման համար թե՛ համայնքի ուժերը հա-մախմբելու ցանկություն եւ կարող-ություն է պետք, թե՛ ներդրումների, դոնորների աջակցություն, ակտիվ համագործակցություն միջազգային եւ տեղական կազմակերպություն-ների հետ, նաեւ գյուղի հոգսերը պե-տական կառույցներին հասցնելու պատրաստակամություն: Իսկ եթե համայնքի ղեկավարն ակտիվ եւ գրագետ չգտնվի, ձեռքերը ծալած մատի, չբարձրաձայնի խնդիրների մասին ու չպահանջի դրանց լուծու-մը, ոչ ոք ինքնակամ ձեռք մեկնելու չի գա...

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՑԱՎԱԿՈՒԹՅՈՒՆ «Այունյաց երկիր» բերթի կոլեկտիվը խորապես ցավակցում է լրագրող Արմինե Ավագյանին՝ մոր՝ Ալվարդի անժամանակ մահվան կապակցությամբ:

ՑԱՎԱԿՈՒԹՅՈՒՆ «խուսուտփ-թիվի» հեռուստաընկերության ղե-կավարությունը եւ տեղեկագրողական խումբը ցավակցում են Արմի-նե Ավագյանին՝ նրա մոր՝ Ալվարդի մահվան առիթով:

Այունյաց երկիր
S A Մ Ն Օ Ր Տ Ս Թ Ե Ր Թ
Գլխավոր խմբագիր՝ ԸՁ ԾՂ Գ Է Ը ԵՑ ԾՍՍՁ Ս
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶՐ - ԾԱՆՈՒԹՅՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:
ՌՆՁԱՄԻ թակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 30.07.2012թ.:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Նոր Աստղաբերդի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի (1.2-1) համայնքային ծառայու-թյան թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին
Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Նոր Աստղաբերդի գյուղական հա-մայնքի /այսուհետ՝ համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմի /այսուհետ՝ աշխատակազմ/ հետեւյալ համայնքային ծառայության թա-փուր պաշտոնն զբաղեցնելու համար.
Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Նոր Աստղաբերդի գյուղական հա-մայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար (ժածկագիր 1.2-1)
Կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում եւ վերահսկում է աշխա-տակազմի ընթացիկ գործունեությունը, ապահովում է աշխատակազմի գործավարու-թյան, նամակագրության եւ արխիվային գործի վարումը, համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը եւ նիստին ներկա ավագանու անդամների կող-մից արձանագրության վավերացումը, համայնքային ծառայության մասին օրենսդրու-թյամբ եւ այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործա-ռույթների իրականացումը: Օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, սահմանված դեպքերում եւ կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքնե-րին, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.
Առնվազն միջնակարգ կրթություն, պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ ենթակե-տուն նշված եւ իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով եւ ժամա-նակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Մրցույթը կանցկացվի 2012թ. օգոստոսի 30-ին, ժամը 11.00-ին Նոր Աստղաբերդի գյուղապետարանի շենքում: Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն 33 քաղաքա-ցիները եւ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:
Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝
■ դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ծեղ լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
■ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայաց-վող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ/ների/, վկայական/ների/, պատճեններ՝ բնօրինակների հետ միասին,
■ արական սեռի անձինք նաեւ զինվորական զբոսայի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
■ մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
■ անձնագրի պատճենը:
Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկու-թյամբ Արեւիսի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ կամ 33 Այունիքի մարզապետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄՂ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային զբոսայի, իսկ արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական զբոսայի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2012 թվականի օգոստո-սի 15-ը, մինչև ժամը 18.00-ը:
Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրա-ցուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցա-շարերին ծանոթանալու համար կարող են դիմել համայնքի ղեկավարի աշխատակազ-մին (հասցե՝ 33 Այունիքի մարզ, գյուղ Նոր Աստղաբերդ, հեռ.՝ (0285) 6 13 34, (093) 64 77 02 կամ 33 Այունիքի մարզապետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄՂ վարչություն (հասցե՝ 33, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, 3եռ.՝ (0285) 2 35 50):